



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

11 դեկտեմբերի 2019 թվական, N 59-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ, 10-րդ և 12-րդ մասերի, 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 16-րդ և 17-րդ հոդվածների՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 11-ի տասնչորսերորդ արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ (6)

Դեմ (չկա)

Ձեռնպահ (չկա)

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ

Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա. ԴԱՎԹՅԱՆ

Գ. ԹՈՐՈՍՅԱՆ

Ա. ՄՈՍԻՆՅԱՆ

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՏԱՍՆՉՈՐՄԵՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԱՐԹՈՒՐ ԽԱՆՎԵԼՅԱՆԻ, ՍԻՐԱՆՈՒՅՇ ԽԱՆՎԵԼՅԱՆԻ, ԶԱՐԵ ԱՍՐՅԱՆԻ, ԳԱԳԻԿ ՉՈՔԱՆՅԱՆԻ, ՄԱՐՈՒՍ ՉՈՔԱՆՅԱՆԻ, ՏԻԳՐԱՆ ԱՂՎԱՆՅԱՆԻ ԵՎ ՌՈԶԱ ՉՈՓՈՒՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.
2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱԿՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ.
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ.
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶՔԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅՄԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.
5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅՄԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.
6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.
7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.
8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՕՁՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄՔՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.
9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔ ԶԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

11 դեկտեմբերի 2019 թվական, N 60-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐԹՈՒՐ ԽԱՆՎԵԼՅԱՆԻ, ՍԻՐԱՆՈՒՅՇ ԽԱՆՎԵԼՅԱՆԻ, ԶԱՐԵ ԱՍՐՅԱՆԻ, ԳԱԳԻԿ ՉՈՔԱՆՅԱՆԻ, ՄԱՐՈՒՍ ՉՈՔԱՆՅԱՆԻ, ՏԻԳՐԱՆ ԱՂՎԱՆՅԱՆԻ ԵՎ ՌՈԶԱ ՉՈՓՈՒՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքի» 19-րդ հոդվածի, «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի եվ հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 822-Ն որոշման՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը և կարծիքը՝

1. Քաղաքացիներ Արթուր Խանվելյանի, Սիրանույշ Խանվելյանի, Զարե Ասրյանի, Գագիկ Չոբանյանի, Մարուս Չոբանյանի, Տիգրան Աղվանյանի և Ռոզա Չոփուրյանի նկատմամբ սահմանել հարկային արտոնություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ (6)

Դեմ (չկա)

Ձեռնպահ (չկա)

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ

Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա. ԴԱՎԹՅԱՆ

Գ. ԹՈՐՈՍՅԱՆ

Ա. ՄՈՍԻՆՅԱՆ

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



ԳԱԳԻԿ ՉՈՐՔԱՆՅԱՆԻ, ՄԱՐՈՒՄ ՉՈՐՔԱՆՅԱՆԻ, ԶԱՐԵ ԱՄՐՅԱՆԻ, ՏԻԳՐԱՆ ԱՂՎԱՆՅԱՆԻ, ՍԻՐԱՆՈՒՇ ԽԱՆՎԵԼՅԱՆԻ, ԱՐԹՈՒՐ ԽԱՆՎԵԼՅԱՆԻ ԵՎ ՌՈՂԱ ՉՈՓՈՒՐՅԱՆԻ ՆԿԱՏԱՄԲ ՎԱՇԱՄԱՐԻ ԱՐՏՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

N	1 Միջոցառման նկարագրի և նպատակի համառոտ նկարագրում	2 Միջոցառման նպատակը	3 Հրահանգի համար	4 Օձուն	5 Միջոցառման նպատակը	6 (տրամադրված փողերի քանակը) Արտոնարարի անվանումը	7 >> Ի >	8 Միջոցառման ընդհանուր արժեքը (ՀՀ ԼՍ Օձուն)	9 Միջոցառման ընդհանուր արժեքը (ՀՀ ԼՍ Օձուն)	10 Միջոցառման ընդհանուր արժեքը (ՀՀ ԼՍ Օձուն)	11 Արտոնարարի անվանումը		12 Ընդամենը
											արտոնարարի անվանումը	արտոնարարի անվանումը	
1	Գագիկ Չորանյան	Գագիկ Չորանյան	ՀՀ ԼՍ Օձուն համայնք, փողոց 6, տուն 17/2	Օձուն	0.132 հա տնամերձ, 1.063 հա վարելահող, 0.218 հա խոտհարք	-	13613032	8004	հարկից ազատում		2013թ. հողի հարկի տույժ	1540	
								8004			2016թ. հողի հարկի տույժ	5062	
											2017թ. հողի հարկի տույժ	231	
											2018թ. հողի հարկի տույժ	1171	
								8004				8004	
2	Մարոտ Չորանյան	Մարոտ Չորանյան	ՀՀ ԼՍ Օձուն համայնք	Օձուն	0.484 հա վարելահող, 0.11 հա խոտհարք	-	13796053	4878	հարկից ազատում		2014թ. հողի հարկի տույժ	1663	
											2015թ. հողի հարկի տույժ	191	
											2016թ. հողի հարկի տույժ	1470	
											2017թ. հողի հարկի տույժ	1367	
											2017թ. հողի հարկի տույժ	187	
								4878				4878	

3	Զարե Ասրյան	ՀՀ ԼՄ Օձոն համայնք	գ. Օձոն	0.484 հա վարելահող, 0.11 հա խոտհարք	-	13831401	7231	հարկից ազատում	2012թ. հողի հարկի տույժ	418
									2017թ. հողի հարկի ապարք	4525
							7231		2017թ. հողի հարկի տույժ	1851
									2018թ. հողի հարկի ապարք	299
									2018թ. հողի հարկի տույժ	138
	Ընդամենը						7231			7231
4	Տիգրան Արվանդյանին	ՀՀ ԼՄ Օձոն համայնք	գ. Օձոն	0.918 հա վարելահող, 0.401 հա տնամերձ, 0.189 հա խոտհարք	-	13618113	28646	հարկից ազատում	2013թ. հողի հարկի տույժ	5761
									2014թ. հողի հարկի տույժ	6147
									2015թ. հողի հարկի տույժ	6147
									2016թ. հողի հարկի տույժ	5705
									2017թ. հողի հարկի տույժ	3848
									2018թ. հողի հարկի տույժ	1038
	Ընդամենը						28646			28646
5	Սիրանուշ Խանվելյան	ՀՀ ԼՄ Օձոն համայնք	գ. Օձոն	1.033 հա վարելահող, 0.219 հա տնամերձ, 0.22 հա խոտհարք	-	13787671	20595	հարկից ազատում	2017թ. հողի հարկի ապարք	10456
									2017թ. հողի հարկի տույժ	5403
									2018թ. հողի հարկի ապարք	3706
									2018թ. հողի հարկի տույժ	1030
	Ընդամենը						20595			20595
6	Արթուր Խանվելյան	ՀՀ ԼՄ Օձոն համայնք	գ. Օձոն	3.7551 հա վարելահող	-	S0250166	2699	հարկից ազատում	2017թ. հողի հարկի տույժ	2650
									2018թ. հողի հարկի տույժ	49
	Ընդամենը						2699			2699

									2008թ. հողի հարկի տույժ	899
									2009թ.. հողի հարկի տույժ	976
									2010թ.. հողի հարկի տույժ	976
									2011թ.. հողի հարկի տույժ	977
									2012թ. հողի հարկի տույժ	976
									2013թ. հողի հարկի տույժ	1603
									2014թ. հողի հարկի տույժ	1603
									2015թ. հողի հարկի տույժ	1604
									2016թ. հողի հարկի տույժ	1198
									2017թ. հողի հարկի տույժ	233
										11045
										63624
7	Ռոզա Չոփուրյանին	ՀՀ ԼՄ Օձուն համայնք	4. Օձուն	0.13 հա տնամերձ, 0.36 հա խոտհարք	13668546	11045	հարկից ազատում			
	Ընդամենը					11045				
	ԸՆԴԱՄԵՆԸ					83098				



Օձուն համայնքի ղեկավար *[Signature]*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

30 հոկտեմբերի 2019 թվական, N 61-Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՄԻՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, առաջին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի համայնքների միության գործադիր տնօրեն Ն. Լափաուրիի 03.10.2019թ. ԵՆ-0310/0993 գրությունը՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Անդամակցել «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը:
2. «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը մուծել համապատասխան տարեկան անդամավճարներ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ (6)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Տ. ԱՂՎԱՆՅԱՆ		
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ		
Ա. ԴԱՎԹՅԱՆ		
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ		
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ		
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ		

ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

11 դեկտեմբերի 2019 թվական, N 62-Ա







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի վարձատրության չափը հաստատել 360000 (երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի վարձատրության չափի մասին» N 76-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ (6)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Տ. ԱՂՎԱՆՅԱՆ 		
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ 		
Ա. ԴԱՎԹՅԱՆ 		
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ 		
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ 		
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ 		

ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Ա. ՏԻՏԱՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

11 դեկտեմբերի 2019 թվական, N 63-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ,
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՎՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 3-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ (6)

Դեմ (չկա)

Ձեռնպահ (չկա)

Տ. ԱՂԱՆՅԱՆ

Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա. ԴԱՎԹՅԱՆ

Գ. ԹՈՐՈՍՅԱՆ

Ա. ՄՈՍԻՆՅԱՆ

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆԻ
 ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ,
 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶՔԱՂԵՑՆՈՂ ԵՎ
 ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
 ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 38:
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Ը/Ը	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (ՀՀ դրամ)	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՍԱԿԱՆ (ՀՀ դրամ)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1	Համայնքի ղեկավար	1	360000	360 000
2	Վարչական ղեկավար	1	185000	185000
3	Վարչական ղեկավար	3	165000	495000
4	Վարչական ղեկավար	4	155000	620000
5	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	210000	210 000
6	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	130000	130 000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
7	Աշխատակազմի քարտուղար	1	270000	270000
8	Աշխատակազմի գլխավոր մասնագետ-հաշվապահ	1	210000	210000
9	Աշխատակազմի գլխավոր մասնագետ-առուղի	1	210000	210000
10	Աշխատակազմի գլխավոր մասնագետ	1	210000	210000
11	Աշխատակազմի առաջատար մասնագետ	9	128000	1152000
12	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	1	115000	115000
13	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	7	100000	700000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
14	Հավաքարար	3	92617	277851
15	Վարորդ	1	152000	152000
ԸՆԴԱՄԵՆԸ		36		5296851

Օծուն համայնքի ղեկավար՝


 (ստորագրություն)

Ա. Տիտանյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

11 դեկտեմբերի 2019 թվական, N 64-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,
ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. հաստատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի N 1-ի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի «Օձունի մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի N 2-ի:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի «Օձունի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի N 3-ի:

4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի «Օձունի գրադարանային համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի N 4-ի:







5. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի «Օձունի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի N 5-ի:

6. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի «Օձունի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի N 6-ի:

7. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ենթակայության համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 78-Ա որոշումը:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ (6)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Տ. ԱՂՎԱՆՅԱՆ 		
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ 		
Ա. ԴԱՎԹՅԱՆ 		
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ 		
Ա. ՄՈՍԻՆՅԱՆ 		
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ 		

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ 




«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ
 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,
 ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը 34:
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (ՀՀ դրամ)	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՍԱԿԱՆ (ՀՀ դրամ)
1	Տնօրեն	1	250000	250000
2	Մեթոդիստ	1	176000	176000
3	Դաստիարակ	10.08	93000	937440
4	Դաստիարակի օգնական	8	92617	740936
5	Երաժիշտ	2	93000	186000
6	Ֆիզ. հրահանգիչ	1	93000	93000
7	Տնփեսվար	1	92617	92617
8	Գործավար	0.5	92618	46309
9	Խոհարար	2	92618	185236
10	Խոհարարի օգնական	1	92617	92617
11	Դռնապան	1	92618	92618
12	Բուժքույր	1.5	93000	139500
13	Օժանդակ բանվոր	1	92618	92618
14	Հաշվապահ	1	152000	152000
	ԸՆԴԱՄԵՆԸ	32.08		3276891

Օձուն համայնքի ղեկավար՝


 (ստորագրություն)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՕՁՈՒՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 19:
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (ՀՀ դրամ)	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՍԱԿԱՆ (ՀՀ դրամ)
1	<i>Տնօրեն</i>	1	120000	120000
2	<i>Դասատու</i>	16	92617	1481872
3	<i>Տնտեսվար</i>	1	92617	92617
4	<i>Տեխնիկական աշխատող</i>	1	92617	92617
	ԸՆԴԱՄԵՆԸ	19		1787106

Օձուն համայնքի ղեկավար՝


 (ստորագրություն)

Ա. Տիտանյան




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՕՁՈՒՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 6:
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (ՀՀ դրամ)	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՍԱԿԱՆ (ՀՀ դրամ)
1	Տնօրեն	1	125000	125000
2	Տեխնիկական աշխատող	0,75	92617	69463
3	Բակապահ	0,75	92617	69463
4	Մարզիչ	0,75	92617	69463
5	Գեղմասվար-գրադարանավար	1	92617	92617
6	Տեխնիկական աշխատող (Արևածագ)	0,5	92617	46309
	ԸՆԴԱՄԵՆԸ	4.75		472315

Օձուն համայնքի ղեկավար՝


 (ստորագրություն)

Ա. Տիտանյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
 «ՕՁՈՒՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ
 ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 4:
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Ը/Ը	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (ՀՀ դրամ)	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՍԱԿԱՆ (ՀՀ դրամ)
1	Տնօրեն-գրադարանավար	1	110000	110000
2	Գրադարանավար	1	110000	110000
3	Տնօրենավար	1	92617	92617
4	Գրադարանային աշխատող	0,5	92617	46309
	ԸՆԴԱՄԵՆԸ	3,5		358926

Օձուն համայնքի ղեկավար՝


 (ստորագրություն)

Ա. Տիտանյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
 «ՕՁՈՒՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՐ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ
 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,
 ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 7:
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (ՀՀ դրամ)	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՍԱԿԱՆ (ՀՀ դրամ)
1	Տնօրեն	1	130000	114000
2	Հաշվապահ	1	110000	110000
3	Գործավար-օպերատոր	1	110000	110000
4	Բանվոր	2	92617	185234
5	Վարորդ	2	92617	185234
	ԸՆԴԱՄԵՆԸ	7		704468

Օձուն համայնքի ղեկավար՝


 (ստորագրություն)

Ա. Տիտանյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
 «ՕՁՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ
 ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 21:
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Ը/Ը	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (ՀՀ դրամ)	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՍԱԿԱՆ (ՀՀ դրամ)	Ծանոթություն Հղիների թիվ X գործակից
1	Տնօրեն	1	192000	192000	
2	Ընտանեկան բժիշկ	1	545731	545731	+հղիների թիվ X570
3	Ընտանեկան բժիշկ	0.5	132648	132648	+հղիների թիվ X 570
4	Ընտանեկան բժիշկ	1	268033	268033	+հղիների թիվ X 570
5	Ավագ բուժքույր	1	89610	89611	
6	Ընտանեկան բուժքույր	1	125027	125027	
7	Ընտանեկան բուժքույր	1	97264	97264	
8	Ընտանեկան բուժքույր	1	110527	110527	
9	Ընտանեկան բուժքույր	1	89633	89633	+ հղիների թիվ X 210
10	Լաբորանտ	1	94550	94550	
11	Դպրոցական բուժքույր	0.5	53477	53477	
12	Դպրոցական բուժքույր	0.5	45592	45592	
13	Գործավար	0.5	44805	44805	
14	Հազվու ԲՄԿ ք/ք	1	98900	98900	
15	Ամոջի ԲՄԿ ք/ք	1	98900	98900	
16	Այգեհատի ԲՄԿ ք/ք	1	98900	98900	
17	Արդվու ԲՄԿ ք/ք	1	98900	98900	
18	Գլխավոր հաշվապահ	1	173000	173000	
19	Համակարգչային օպերատոր	1	92618	92618	
20	Ավտովարորդ	1	89610	89611	
21	Կրտսեր բուժ. աշխատող	1	89610	89611	
22	Պահակ	1	89610	89611	
	ԸՆԴԱՄԵՆԸ	20	2818949	2818949	

Օձուն համայնքի ղեկավար՝



(Handwritten signature)
 (սպորազրույթուն)

Ա. Տիտանյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

11 դեկտեմբերի 2019 թվական, N 65-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ,
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-14-րդ հոդվածներով՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ (6)

Դեմ (չկա)

Ձեռնպահ (չկա)

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ

Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա. ԴԱՎԹՅԱՆ

Գ. ԹՈՐՈՍՅԱՆ

Ա. ՄՈՍԻՆՅԱՆ

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ,
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

1. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար (15000) դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար (30000) դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար (50000) դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար (50000) դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար (100000) դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար (3000) դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար (5000) դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար (3000) դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար (5000) դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար (200000) դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար (60000) դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար (50000) դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար հինգ հարյուր (2500) դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար հարյուր (3100) դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար (5000) դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար հինգ հարյուր (11500) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար (13000) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար (25000) դրամ,

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար հինգ հարյուր (2500) դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար հարյուր (3100) դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար (5000) դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար հինգ հարյուր (10500) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար (13000) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար (25000) դրամ,

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն (350) դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար,

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար (25000) դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար (50000) դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր տաս հազար (210000) դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր տաս հազար (510000) դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր վաթսուն հազար (260000) դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր տաս հազար (110000) դրամ,

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար (5000) դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար (7000) դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար (12000) դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնվեց հազար (16000) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քանհինգ հազար (25000) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քառասուն հազար (40000) դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հարյուր (300) դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար երկու հարյուր (1200) դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր (2500) դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար (5000) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար (10000) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար (20000) դրամ,

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ակոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար (2000) դրամ,

բ. թունդ ակոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր (3500) դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո (0) դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր (1500) դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Համայնքի խորհրդանիշերը (գինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար (50000) դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար (5000) դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հիսուն հազար (250000) դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար (1250000) դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար (2500000) դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք միլիոն հինգ հարյուր հազար (3500000) դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն (5000000) դրամ.

16) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար հիսուն հազար (50000) դրամ.

17) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար տասը հազար (10000) ՀՀ դրամ.

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար հարյուր հազար (100000) ՀՀ դրամ:

2. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար (5000) դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարելավումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար (5000) դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար (5000) դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար (5000) դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար (5000) դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ չորս հազար (4000) դրամ.

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանել՝

ա) կենցաղային աղբի համար՝

ըստ համայնքում բնակվող (փաստացի առկա) յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական հարյուր (100) դրամ,

բ) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար (3000) դրամ,

Ընդ որում աղբահանության վճար վճարող առանձին կատեգորիայի անձանց համար սահմանել հետևյալ արտոնությունները՝

ա) Հայրենական մեծ պատերազմի վետերանների, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքների համար՝ հարյուր տոկոսի չափով.

բ) բազմաշունչ (7 և ավելի) ընտանիքների համար՝ երեսուն տոկոսի չափով: ամսական հարյուր (100) դրամ

8) Համայնքում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական, հանրային, ծառայությունների մատուցման, արտադրական, արդյունաբերական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանել ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա) առևտրի (այդ թվում՝ շուկաներ), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսական հիսուն (50) դրամ,

բ) հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայությունների, ինչպես նաև նմանատիպ այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսական քսան (20) դրամ,

գ) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսական 10 (տաս) դրամ,

դ) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսական 15 (տասհինգ) դրամ,

ե) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկել ավելի բարձր դրույքաչափով:

9) Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը սահմանվում է կոնկրետ աղբահանության վճար վճարողի քանակի համար սույն գլխի 7-րդ կետի դրույքաչափերով հաշվարկված աղբահանության վճարի քսան տոկոսի չափով:

10) Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝

ա) Օձուն համայնքում հաշվառված բնակիչների համար ամսական վարձավճարը սահմանել 0 (0) դրամ:

բ) Օձուն համայնքում հաշվառում չունեցող բնակիչների համար ամսական վարձավճարը՝ հինգ հազար (5000) դրամ:

11) Համայնքային ենթակայության արտադարձական դաստիարակության հաստատության («Օձունի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ) ծառայություններից օգտվողների համար՝

ա) Օձուն համայնքում հաշվառված բնակիչների համար ամսական վարձավճարը սահմանել 0 (0) դրամ:

բ) Օձուն համայնքում հաշվառում չունեցող բնակիչների համար ամսական վարձավճարը՝ հինգ հազար (5000) դրամ:

